

3258

Ի. ՍՏԱԼԻՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ



3K33

4-97

ԻՍՏԱՆ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՎ

3K33 *այ*
4-97

21 JUN 2005

Ի. ՍՏԱԼԻՆ

14 NOV 2000

999

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

98
98

И. СТАЛИН
ОЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ
ПАРТИИ В НАЦИОНАЛЬНОМ
ВОПРОСЕ

Армпартиздат, Ереван, 1937

84

38

Նախքան կուսակցության՝ ազգային հարցի վերաբերյալ կոնկրետ հերթական խնդիրներին անմիջականորեն անցնելը, անհրաժեշտ է սահմանել միջանի նախադրյալ, առանց վրոնց անհնարին է ազգային հարցի լուծումը: Այդ նախադրյալները վերաբերում են ազգերի յերևան գալու, ազգային ճնշման սաղմնավորվելու, պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցող ազգային ճնշման ձևերի և ապա՝ զարգացման զանազան շրջաններում ազգային հարցի լուծման ձևերի հարցին:

Այդպիսի յերեք շրջան կա:

Առաջին շրջանը՝ դա—Արևմուտքում Ֆեոդալիզմի լիկվիդացիայի և կապիտալիզմի հաղթության շրջանն է: Մարդկանց վրոպես ազգեր կազմավորվելը զուգադիպում է այդ շրջանին: Յես նկատի ունեմ այնպիսի յերկիրներ, ինչպիսիք են Անգլիան (առանց Իռլանդիայի), Ֆրանսիան, Իտալիան: Արևմուտքում—Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և մասամբ Գերմանիայում Ֆեոդալիզմի լիկվիդացիայի և մարդկանց վրոպես ազգեր կազմավորվելու շրջանն ըստ ժամանակի ընդհանուր ու ամբողջական առումով զուգադիպեց կենտրոնացված պետությունների յերևան գալու շրջանին, վրի պատճառով ազգերն այնտեղ իրենց զարգացման ընթացքում պետական ձևեր եյին ընդունում: Յեմ վրոքանով վրոպես պետությունների ներսում չկային ազգային ուրիշ փոքրիչատե նշանակելի խմբեր, այնքանով ել այնտեղ չկար նաե ազգային ճնշում: Յեմլրոպայի արևելքում, ընդհակառակը, ազգությունների դոյացման և Ֆեոդալական տրոհվածության վրոքացման պրոցեսն ըստ ժամանակի չզուգադիպեց կենտրոնացված պետությունների դոյացման պրոցեսին: Յես նկատի ունեմ Հունգարիան, Ավստրիան, Ռուսաստանը: Այս յերկիրներում կապիտալիստական զարգացում դեռևս չկար, այն, թերևս, նոր եր սաղմնավորվում, այնինչ, թուրքերի, մոնղոլների և Արևելքի այլ

ժողովուրդները արշավանքից պաշտպանվելու շահերը պահանջում էին անհապաղ կազմել կենտրոնացված այնպիսի պետութիւններ, վորոնք ընդունակ լինեյին զսպելու արշավանքի ուժը: Յեւ վորովհետեւ Յեւրոպայի արեւելքում կենտրոնացված պետութիւնները յերեւան դալու պրոցեսն ավելի արագ եր ընթանում, քան մարդկանց վորպէս ազգեր կազմավորվելու պրոցեսը, ուստի այնտեղ դոյացան խառն պետութիւններ, վորոնք բաղկացած էին իրրեւ ազգեր տակավին չկազմավորված, բայց արդեն իրրեւ ընդհանուր պետութիւն միավորված միջանի ժողովուրդներէի:

Այսպիսով, առաջին շրջանը բնորոշվում է կապիտալիզմի արշալույսին ազգութիւնների յերեւան դալով, ըստվորում՝ Յեւրոպայի արեւմուտքում ծնվում են դուտ-ազգային պետութիւններ՝ առանց ազգային ճնշման, իսկ Արեւելքում ծնվում են բազմազգ պետութիւններ՝ մի, ավելի զարգացած ազգի գլխավորութիւնում և մնացած՝ ավելի պակաս զարգացած ազգերով, վորոնք յենթարկվում են տիրապետող ազգին քաղաքականապէս, իսկ ապա նաեւ տնտեսապէս: Արեւելքի այդ բազմազգ պետութիւնները յեղան այն ազգային ճնշման հայրենիքը, վորն առաջացրեց ազգային կոնֆլիկտներ, ազգային շարժումներ, ազգային հարց և այդ հարցի լուծման դանադան յեղանակներ:

Ազգային ճնշման զարգացման և այդ ճնշման դեմ պայքարելու յեղանակների զարգացման յերկրորդ շրջանը դուգադիպում է իմպերիալիզմի յերեւան դալու շրջանին, յերբ կապիտալիզմը, վորոնելով վաճառահանման, հումքի, վառելիքի և եփան բանութի շուկաներ, յերբ նա, պայքարելով կապիտալի արտահանման և յերկաթուղային ու ծովային մեծ ճանապարհների ապահովման համար, դուրս է թուշում ազգային պետութիւն շրջանակներից և ընդարձակում է իր տերիտորիան՝ մոտիկ ու հեռու հարեանների հաշիւին: Այս յերկրորդ շրջանում հին ազգային պետութիւնները Արեւմուտքում—Անգլիան, Իտալիան, Ֆրանսիան—դադարում են ազգային պետութիւններ լինելուց, այսինքն՝ նրանք, նոր տերիտորիաներ զավթելու հետեանքով, բազմազգ, գաղութային պետութիւններ են դառնում՝ դրանով իսկ հանդիսանալով հենց ազգային ու գաղութային այն ճնշման ասպարեղը, վորը դեռ առաջ գոյութիւն ուներ Յեւրոպայի արեւելքում: Յեւրոպայի արեւմեւելքում այդ շրջանը բնորոշվում է հպատակ ազգերի (չեխեր, լեհեր, ուկրաինացիներ) զարթոնքով և ուժեղացումով, վորոնք իմպերիալիստական պատերազմի հետեանքով հանդեցնում են հին քուրժուական բազմազգ պետութիւնների քայքայմանը և նոր

ազգային պետութիւնների գոյացմանը, —պետութիւններ, վորոնք ստրկական դրութիւն մեջ են դտնվում այսպէս կոչված մեծ պետութիւնների հանդեպ:

Յերրորդ շրջանը՝ դա—խորհրդային շրջանն է, կապիտալիզմի վոնջնացման ու ազգային ճնշման վերացման շրջանը, յերբ տիրապետող ու հպատակ ազգերի, գաղութների ու մետրոպոլիայի հարցը անցնում է պատմական արխիւ, յերբ ՌՍՖՍՀ տերիտորիայի վրա մեր առջեւ բարձրանում են ազգութիւններ, վորոնք ունեն հալասար իրավունքներ, զարգանալու հալասար հնարավորութիւն, բայց իրենց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական հետամնացութիւն պատճառով պահպանել են պատմականորեն ժառանգած վորոշ անհալասարութիւն: Ազգութիւնների այդ անհալասարութիւն եյութիւնն այն է, վոր մենք, պատմական զարգացման շնորհիւ, անցյալից մի ժառանգութիւն ենք ստացել, ըստ վորի մի ազգութիւն, այն է՝ վելիկոռուսականը, քաղաքական ու արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած է դուրս յեկել, քան մյուս ազգութիւնները: Արանից ել՝ փաստական անհալասարութիւն, վորը մի տարում չի կարող վերացվել, բայց վորը պետք է վերացվի՝ հետամնաց ազգերին տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ողնութիւն ցույց տալու միջոցով:

Ահա ազգային հարցի զարգացման յերեք շրջանը, վորը պատմականորեն անցել է մեր առջեւ: Առաջին յերկու շրջանները մի ընդհանուր դիմ ունեն: Այդ դիմն այն է, վոր ազգութիւնները յերկու շրջանումն ել ճնշում ու ստրկացում են կրում, վորի պատճառով ազգային պայքարը ուժի մեջ է մնում, իսկ ազգային հարցը՝ չլուծված: Բայց նրանց միջեւ տարբերութիւն ել կա: Դա այն է, վոր ազգային հարցն առաջին շրջանում դուրս չի գալիս առանձին բազմազգ պետութիւնների շրջանակներից և ընդգրկում է միայն սակավաթիւ, գլխավորապէս յեւրոպական ազգութիւնները, մինչդեռ յերկրորդ շրջանում ազգային հարցը ներպետական հարցից վերածվում է միջպետական հարցի—իմպերիալիստական պետութիւնների միջեւ պատերազմ մղելու հարցի՝ իրապակաս ազգութիւններն իրենց հպատակեցրած պահելու համար, Յեւրոպայի սահմաններից դուրս նոր ժողովուրդներ ու ցեղեր իրենց ազգեցութիւնը յենթարկելու համար: Այսպիսով, ազգային հարցը, վորն առաջներում միայն կուլտուրական յերկիրներում նշանակութիւն ուներ, այս շրջանում կորցնում է իր

մեկուսացած բնույթը և միաձուլվում է զաղութների ընդհանուր հարցի հետ:

Ազգային հարցի զարգանալը և համազաղութային հարց դառնալը պատմական պատահականություն է: Այդ զարգացումը բացատրվում է, նախ, նրանով, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակ պատերազմած պետությունների իմպերիալիստական խմբերն իրենք հարկադրված յեղան դիմել զաղութներին, վորտեղից նրանք մարդկային նյութ եյին քաղում, վորից դորքեր եյին ստեղծվում: Անկասկած է, վոր այս պրոցեսը, իմպերիալիստների կողմից զաղութների հետամնաց ժողովուրդներին անխուսափելիորեն դիմելու պրոցեսը, չեր կարող այդ ցեղերին ու ժողովուրդներին չարթնացնել ազատագրման համար, պայքարի համար: Այնուհետև՝ յերկրորդ դործոնը, վորը հանգեցրեց այն բանին, վոր ազգային հարցը լայնացավ, զարգացավ ու դարձավ համազաղութային մի հարց, վորն ընդգրկեց ամբողջ յերկրագունդը սկզբում ազատագրական շարժման կայծերով, ապա նաև բոցով, դա՝ իմպերիալիստական խմբերի՝ Թյուրքիան բաժանելու և նրա պետական գոյությունը դադարեցնելու փորձն է: Թյուրքիան, վորը մոսսուլմանական ժողովուրդների մեջ պետականության կողմից ամենազարգացած յերկիրն է, այդ Թյուրքիան չեր կարող հաշտվել այսպիսի հեռանկարի հետ, նա պայքարի դրող բարձրացրեց և իմպերիալիզմի դեմ իր շուրջը համախմբեց Արևելքի ժողովուրդներին: Յերրորդ դործոնը՝ դա—Խորհրդային Ռուսաստանի յերևան գալն է, վորի պայքարն իմպերիալիզմի դեմ մի շարք հաջողութուններ ունեցավ, և, բնականորեն, վորդեորեց Արևելքի ճնշված ժողովուրդներին, արթնացրեց նրանց, պայքարի բարձրացրեց նրանց և դրանով իսկ հնարավորություն տվեց ճնշված ազգութայինների ընդհանուր ճակատ ստեղծելու՝ Իսլանդիայից մինչև Հնդկաստան:

Ահա այն բոլոր դործոնները, վորոնք ազգային ճնշման զարգացման յերկրորդ ստադիայում հանգեցրին այն բանին, վոր բուրժուական հասարակութայինը վոչ միայն չլուծեց ազգային հարցը, վոչ միայն չհանդեցրեց խաղաղության՝ ժողովուրդների միջև, այլ, ընդհակառակը, ազգային պայքարի կայծը բորբոքելով՝ դարձրեց ճնշված ժողովուրդների, զաղութների ու կիսազաղութների պայքարի բոց՝ ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի:

Ակներև է՝ միակ ուժիմը, վորն ընդունակ է ազգային հարցը լուծելու, այսինքն, այն ուժիմը, վորն ընդունակ է դաժողան

ժողովուրդների և ցեղերի խաղաղ համակեցությունն ու յեղբայրական համագործակցությունն ապահովող պայմաններ ստեղծելու, դա խորհրդային իշխանության ուժիմն է, պրոլետարիատի դիկտատուրայի ուժիմը:

Հաղիվ թե հարկ կա անպացուցելու, վոր կապիտալի տիրապետության, արտադրության միջոցների մասնավոր սեփականության տիրապետության և դասակարգերի գոյության պայմաններում չի կարող ապահովված լինել ազգութայինների հավասարությունը, վոր, քանի դեռ գոյություն ունի կապիտալի իշխանությունը, քանի դեռ պայքար է մղվում արտադրության միջոցներին տիրանալու համար, ազգութայինների վոչ մի հավասարություն չի կարող լինել, ինչպես և չի կարող լինել համագործակցություն ազգերի աշխատավորական զանգվածների միջև: Պատմությունն ասում է, վոր ազգային անհավասարությունը վոչ չնչացնելու միակ յեղանակը, ճնշված և չճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների յեղբայրական համագործակցության ուժիմ հաստատելու միակ յեղանակը՝ դա—կապիտալիզմի վերացումը և խորհրդային հասարակարգի հաստատումն է:

Այնուհետև, պատմությունը ցույց է տվել, թե, վորքան վոր առանձին ժողովուրդներին հաջողվում է ազատագրվել իրենց ազգային բուրժուազիայից, ինչպես նաև «ոտար» բուրժուազիայից, այսինքն, վորքան վոր նրանք իրենց մոտ խորհրդային հասարակարգ են հաստատել, իմպերիալիզմի առկայության պայմաններում նրանք ի վիճակի չեն առանձին գոյություն ունենալու և հաջողութամբ պաշտպանելու իրենց գոյությունը՝ առանց խորհրդային հարևան հանրապետութայինների տնտեսական ու ուղղմական աջակցության: Հունդարիայի որինակը պերճախոս կերպով ցույց է տալիս, վոր առանց խորհրդային հանրապետութայինների պետական միության, առանց նրանց վորպես միասնական ուղղմա—տնտեսական ուժ համախմբվելուն անհնարին է հաստատուն մնալ համաշխարհային իմպերիալիզմի մնացած ուժերի հանդեպ վոչ ուղղմական, վոչ էլ տնտեսական ճակատներում:

Խորհրդային հանրապետութայինների ֆեդերացիան բնական միության այն վորոնք ձևն է, վորի կենդանի մարմնացումը ՌՍՖՍՀ-ն է:

Ահա՛, ընկերներ՛, այն նախադրյալները, վորոնց մասին յես ուզում եյի կանխապես այստեղ խոսել նրա համար, վորպեսզի հետո հիմնավորեմ ազգային հարցը ՌՍՖՍՀ չրջանակներում լու-

ծելու գործում մեր կուսակցութեան կողմից վորոշ քայլեր անելու անհրաժեշտութիւնը:

Թեև խորհրդային ռեժիմի որով Ռուսաստանում և Ռուսաստանի հետ կապված հանրապետութիւններում այլևս չկան վոչ իշխող, վոչ ել իրավադուրի ազդութիւններ, վոչ մետրոպոլիա, վոչ ել գաղութներ, վոչ շահագործվողներ, վոչ ել շահագործողներ, բայց և այնպէս, ազգային հարց Ռուսաստանում այնուամենայնիվ գոյութիւն ունի: Ազգային հարցի ելութիւնը Ռուսաստանում այն է, վոր վոչնչացնենք ազդութիւնների այն հետամնացութիւնը (տնտեսական, քաղաքական, կուլտուրական), վորը մենք ժառանգել ենք անցյալից, վոր հետամնաց ժողովուրդներին հնարավորութիւն տանք կենտրոնական Ռուսաստանին հասնելու՝ թե պետական, թե կուլտուրական և թե տնտեսական տեսակետներից: Հին ռեժիմի որով ցարական իշխանութիւնը չէր աշխատում և չէր ել կարող աշխատել դարգացնելու պետականութիւնն Ուկրաինայում, Ադրբեյջանում, Թուրքեստանում և այլ ծայրամասերում. նա կռվում էր ծայրամասերում պետականութիւն գարդացնելու դեմ, ինչպէս նաև նրանց կուլտուրական դարգացման դեմ՝ ձգտելով բռնութեամբ ասիմիլացիայի յենթարկելու տեղական բնակչութիւնը: Ապա, հին պետութիւնը, կալվածատերերն ու կապիտալիստները ժառանգութիւն են թողել այնպիսի հալածված ժողովուրդներ, ինչպիսիք են կիրգիզները, չեչենները, ոսերը, վորոնց հողերը ծառայել են Ռուսաստանի կաղակային և կուլակային տարրերի կոլոնիզացիայի համար: Այդ ժողովուրդները դատապարտված են յեղել չլաված տանջանքների ու մահացման: Այնուհետև, իշխող ազդութիւն հանդիսացած վելիկոռուս ազդութիւնը իր ազդեցութեան հետքերը թողել է նույնիսկ կոմունիստ-ռուսների վրա, վորոնք չեն կարողանում կամ չեն կամենում ավելի մոտենալ բնիկներին աշխատավորական մասսաներին, հասկանալ նրանց կարիքները և ոգնել նրանց, վոր դուրս գան հետամնացութիւնից ու անկուլտուրականութիւնից: Յեւ խոսում եմ ռուս կոմունիստների այն սակավթիվ խմբերի մասին, վորոնք, իրենց աշխատանքի մեջ անտեսելով կենցաղի ու կուլտուրայի առանձնահատկութիւնները ծայրամասերում՝ յերբեմն թեքվում են ռուսական մեծապետական շովինիզմի կողմը: Ապա, ազգային ճնշում ապրած վոչ-ռուս ազդութիւնների դեռութիւնը նույնպէս ազդեցութիւն է ունեցել կոմունիստ-բնիկների վրա, վորոնք յերբեմն չեն կարողանում տարբերել իրենց ժողովրդի աշխատավորական մասսաների

գասակարգային շահերն այսպէս կոչված «համաժողովրդական» շահերից: Յեւ խոսում եմ դեպի տեղական բնիկների նացիոնալիզմը յեղած այն թեքման մասին, վորը յերբեմն դիտվում է կոմունիստ բնիկների շարքերում և վորը Արեւելքում արտահայտվում է պանիսլամիզմով, պանթյուրքիզմով: Վերջապէս, անհրաժեշտ է մահացումից վրկել կիրգիզներին, բաշկիրներին և լեռնային մի քանի ցեղեր, ապահովել նրանց համար անհրաժեշտ հողեր ի հաշիվ կուլակ-կոլոնիզատորների:

Ինորոշելով կուսակցութեան այս հերթական խնդիրները՝ յեւ կողեյի անցնել ընդհանուր խնդրին—մեր կոմունիստական քաղաքականութիւնը ծայրամասերում տնտեսական կացութեան այն հատուկ պայմաններին հարմարեցնելու խնդրին, վոր մենք ունենք գլխավորապէս Արեւելքում:

Իման այն է, վոր մի ամբողջ շարք, գլխավորապէս թյուրքական ժողովուրդներ—նրանք մոտ 30 միլիոն են—չեն անցել, չեն կարողացել անցնել արդյունաբերական կապիտալիզմի շրջանը, ուստի չունեն կամ գրեթե չունեն արդյունաբերական պրոլետարիատ, վորի պատճառով նրանք հարկադրված են տնտեսութեան նախնադարյան ձևերից անցնել խորհրդային տնտեսութեան ստագիւն՝ առանց արդյունաբերական կապիտալիզմի շրջանն անցնելու: Այս ծանր, բայց բնավ վոչ անհնարին ողբերգիան կատարելու համար անհրաժեշտ է հաշիւ առնել այդ ժողովուրդներին տնտեսական կացութեան, նույնիսկ պատմական անցյալի, կենցաղի ու կուլտուրայի բոլոր առանձնահատկութիւնները: Անկրակայելի ու վտանգավոր է այս ժողովուրդների տեղիտորիան փոխադրել այն միջոցառումները, վորոնք ուժ ու նշանակութիւն են ունեցել այստեղ, Ռուսաստանի կենտրոնում: Պարզ է, վոր ՌՍՖՍՀ տնտեսական քաղաքականութիւնը կիրառելիս անպայման պետք է նկատի ունենալ տնտեսական կացութեան, գասակարգային կառուցվածքի, պատմական անցյալի այն բոլոր առանձնահատկութիւնները, վոր մենք գտանք ծայրամասերում: Ի՛նչ յեւ չեմ խոսում այնպիսի անպատեհութիւններ յերացման մասին, ինչպիսին է, որինակ, Պարթոկոմատի պահանջը՝ մասնաբաշխման (разверстка) կարգով խողեր հանձնել կիրգիզիայում, վորտեղ մոնոպոլիան բնակչութիւնը յերբեք խող չի ունեցել: Այս որինտելից յերևում է, թե մինչև վո՛ր աստիճան չեն ուղում հաշիւ նշատել կենցաղի այն առանձնահատկութիւնների հետ, վորոնք առաջին իսկ ճանապարհորդի աչքին են բնկնում:

Ինձ հենց նոր մի տոմսակ (записка) տվին՝ խնդրելով պա-

տասխանել ընկ. Չիչերինի հոգւածին: Ընկերներ, յետ դառնում եմ, վոր Չիչերինի հոգւածներին¹, վորոնք յետ ուշագործությամբ եմ կարգացել, բացի գրականագործությունից (литературщина), ուրիշ վոչինչ չստացվեց: Այնտեղ չորս սխալ կամ թյուրիմացություն կա: Նախ, ընկ. Չիչերինը հակամետ ե ժխտելու իմպերիալիստական պետությունների միջև յեղած հակասությունները՝ դերազնահատելով իմպերիալիստների ինտերնացիոնալ միափորումը և աչքաթող անելով, թերազնահատելով իմպերիալիստական խմբերի ու պետությունների միջև յեղած այն ներքին հակասությունները, վորոնք դոյություն ունեն և պատերազմ են ծնում (Ֆրանսիա, Ամերիկա, Անգլիա, Ճապոնիա և այլն): Նա դերազնահատել է իմպերիալիստական վերնախավերի միափորման մոմենտը և թերազնահատել է այն հակասությունները, վոր կան այդ տրեստի ներսում: Իսկ մինչդեռ՝ այդ հակասությունները յիսն, և նրանց վրա յետ խարսխվում Արտգործադրկոմատի գործունեությունը: Ապա՝ ընկ. Չիչերինը թույլ է տալիս յերկրորդ սխալը: Նա թերազնահատում է այն հակասությունները, վոր դոյություն ունեն իշխող մեծ պետությունների և նորերս կազմված ազգային պետությունների միջև (Չեխո-Սլովակիա, Լեհաստան, Ֆինլանդիա և այլն), վորոնք Ֆինանսապետ և ռազմական նապետ յենթարկված են այդ մեծ պետություններին: Ընկ. Չիչերինը միանգամայն աչքաթող է արել, վոր, չնայած ազգային այդ պետությունների յենթարկված լինելուն մեծ պետություններին կամ, ավելի ճիշտը, չնորհիմ այդ յենթարկման՝ մեծ պետությունների և այդ պետությունների միջև կան հակասություններ, վորոնք արտահայտվեցին, որինակ, Լեհաստանի, Եստոնիայի և այլոց հետ ունեցած բանակցությունների ժամանակ: Արտգործադրկոմատի դոյության իմաստը հենց այն է, վոր այդ բոլոր հակասությունները հաշվի առնի, նրանց վրա խարսխի, խուսանալի (защитить) այս հակասությունների չրջանակներում: Ամենաապշեցուցիչ կերպով ընկ. Չիչերինը թերազնահատել է այս մոմենտը: Ընկ. Չիչերինի յերրորդ սխալն այն է, վոր նա չափազանց շատ է խոսում ազգային ինքնորոշման մասին, վորը, իրոք, դարձել է իմպերիալիստների կողմից հարմարաբար օգտագործվող մի դատարկ լոգուն: Ընկ. Չիչերինը տարրերինակ կերպով մոռացել է, վոր մենք այս լոգունգին արդեն յերկու

տարի յետ, ինչ հրաժեշտ ենք տվել: Այդ լոգունգը մեր ծրագրի մեջ այլևս չկա: Մեր ծրագրի մեջ խոսվում է վոչ թե ազգային ինքնորոշման մասին, — միանգամայն ճապաղ մի լոգունգ, — այլ ավելի հստակաձույլ ու պարզորոշ լոգունգի մասին, — ժողովուրդների պետական անջատման իրավունքի մասին: Սրանք յերկու տարբեր բաներ են: Ընկ. Չիչերինն իր հոգւածների մեջ տարրերինակ կերպով հաշվի չի առնում այս մոմենտը, վորի պատճառով նրա բոլոր առարկությունները մի լոգունգի դեմ, վորը ճապաղ է դարձել, անդնդակ կրակոցի բնույթ են ստանում, վորովհետև վոչ յետ իմ թեղիսներում, վոչ ել կուսակցության ծրագիրը վոչ մի խոսքով չեն հիշատակում «ինքնորոշման» մասին: Այնտեղ խոսվում է միայն ժողովուրդների պետական անջատման իրավունքի մասին: Բայց գաղութներում բորբոքվող աղատադրական շարժման տվյալ մոմենտում մեզ համար այդ լոգունգը հեղափոխական մի լոգունգ է հանդիսանում: Վորքան վոր խորհրդային պետությունները՝ կամավոր սկզբունքներով միափորվում են իրրե ֆեդերացիա, այդչափ ել անջատման իրավունքը ՌՍՖՍՀ մեջ մտնող ժողովուրդների իսկ կամքով մնում է չօղտագործված: Իսկ վորքան վոր մենք գործ ունենք այն գաղութների հետ, վորոնք դառնում են Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Ճապոնիայի ճանկերում, վորքան վոր մենք գործ ունենք այնպիսի ստորադրյալ յերկրների հետ, ինչպիսիք են Արաբիան, Միջագետքը, Թյուրքիան, Հնդկաստանը, այսինքն՝ այն յերկրները հետ, վորոնք Անտանտի գաղութներ են, այդչափ ել ժողովուրդների անջատման իրավունքի լոգունգը հեղափոխական լոգունգ է, և հրաժարվել նրանից՝ նշանակում է Անտանտին ձեռնառու բան անել: Չորրորդ թյուրիմացությունը՝ դա — գործնական ցուցումների բացակայությունն է ընկ. Չիչերինի հոգւածներում: Հոգւածներ գրելն, իհարկե, հեշտ է, բայց դրանք «ընկ. Ստալինի թեղիսների դեմ» վերնագրելու համար պետք է առաջադրել վորեւ լուրջ բան, թեկուզ գործնական հակառակադրելներ: Այնինչ՝ յետ նրա հոգւածներում չկա գործնական վոչ մի առաջարկ, վորին արժենար ունիւղրել:

Յետ վերջացնում եմ, ընկերներ: Մենք յեկանք հետեյալ յեղրակացություններին: Բուրժուական հասարակությունը վոչ միայն անընդունակ յեղալ լուծելու ազգային հարցը, այլ, ընդհանրապես, այն «լուծելու» իր փորձերով նա ազգային հարցը բորբոքեց ու դարձրեց գաղութային հարց և իր դեմ ստեղծեց մի նոր ճակատ, վորը ձգվում է Իւլանդիայից մինչև Հնդկաստան: Միակ

¹ Խոսքը Չիչերինի այն հոգւածների մասին է, վորոնք գետեղվել են X համադումարին նվիրված դիսկուսիոն թերթիկներում: ԽՄԲ:

պետութիւնը, վորն ընդունակ է դնելու և լուծելու ազգային հարցը, դա այն պետութիւնն է, վորը հենված է արտագրութիւն միջոցների ու գործիքների կողմէի սեփականութիւն վրա, խորհրդային պետութիւնը: Խորհրդային Ֆեդերատիվ պետութիւնն որով ալլեւ չկան վոչ ճնշված, վոչ ել իշխող ազգութիւններ, ազգային ճնշումը վոչնչացված է, բայց, հին բուրժուական հասարակարգից ժառանգած՝ ավելի կուլտուրական ու պահպան կուլտուրական ազգութիւնների փաստական անհավասարութիւն (կուլտուրական, տնտեսական, քաղաքական) պատճառով՝ ազգային հարցն ստանում է մի ձև, վորը պահանջում է մշակել այնպիսի միջոցառումներ, վորոնց նպատակն է հեշտացնել հետամնաց ժողովուրդների աշխատավորական մասսաների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական առաջադիմութիւնը, նրանց հնարավորութիւն տալ հասնելու առաջ անցած կենտրոնական պրոլետարական՝ Ռուսաստանին: Սրանից բխում են գործնական այն առաջարկները, վորոնք կազմում են ազգային հարցի վերաբերմամբ իմ առաջարկած թեզիսների յերրորդ բաժնի բովանդակութիւնը¹: (Ծափահարութիւններ):

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍԲ

Ընկերներ: Ազգային հարցի վերաբերյալ դիտկութիւնում ամենաբնորոշը տվյալ համագումարի համար՝ դա—այն է, վոր մենք ազգային հարցի վերաբերյալ դեկլարացիաներից՝ Ռուսաստանի վարչական վերաբաժանմամբ անցել ենք հարցի գործնական դրմանը: Հոկտեմբերյան հեղափոխութիւն սկզբին մենք սահմանափակվում էինք ժողովուրդների անջատման իրավունքների զեկլարացիայով: Հետամնաց ժողովուրդների աշխատավորական մասսաները Ռուսաստանի պրոլետարիատի հետ մոտիկացնելու շահերից յեղնելով՝ 1918 թ. և 1920 թ. մենք աշխատանք էինք կատարում Ռուսաստանն ըստ ազգային հատկանիշի վերաբաժանման յենթարկելու դժով: Իսկ ներկայումս մենք այս համագումարում գուտ գործնական հողի վրա հարց ենք դնում այն մասին, թե աշխատավորական մասսաների ու մանր-բուրժուական տարրերի նկատմամբ ինչպիսին պետք է լինի կուսակցութիւն քաղաքականութիւնը Ռուսաստանի հետ կապված ամսոնոմ մարզերի և անկախ հանրապետութիւնների ներսում: Այս պատճառով ինձ

«աղչեցրեց ընկ. Զատոնսկու հայտարարութիւնն այն մասին, թե ձեզ առաջարկած թեզիսները վերացական բնույթ են կրում. յես ձեռքումս ունեմ նրա սեփական թեզիսները, վորոնք նա, չգիտես ինչու, հառաջադրեց համագումարի ուղադրութիւնը,—թեզիսներ, վորտեղ ինձ հՀանդիպեց դանել գործնական բնույթի վոչ մի առաջարկ,—բառացի վոչ մի, բացառութիւն, ասենք, մի առաջարկ այն մասին, վոր «ՌՍՖՍՀ» անունը փոխարինվի «Արևելայեփրոպական» բառով, իսկ «Ռուսաստանյան» բառը՝ «Ռուսական» կամ «վելիկոռուսական» բառով: Այս թեզիսների մեջ գործնական ուրիշ առաջարկներ յես չգտա:

Յես այժմ անցնում եմ հաջորդ հարցին: Պետք է հայտարարեմ, վոր յելույթ ունեցած պատվիրակներից յես ավելին էլի սպասում: Ռուսաստանում քսաներկու ծայրամաս են հաշվում, ընտրում՝ այդ ծայրամասերից վոմանց ուժղնապես շոշափել և արդյունաբերական զարգացումը, և նրանք արդյունաբերական կողմից քիչ բանով են տարբերվում Ռուսաստանից, մյուսները դեռ չեն անցել կապիտալիզմի ստադիան և արմատապես տարբերվում են կենտրոնական Ռուսաստանից, յերրորդները բոլորովին ծեծկված են: Թեզիսների մեջ անհնարին է ընդգրկել ծայրամասերի այս ամբողջ բաղադրանութիւնը իր ամբողջ կոնկրետութիւնը: Զի կարելի պահանջել, վոր ամբողջութիւն անած վողջ կուսակցութիւն համար նշանակութիւն ունեցող թեզիսները կրեն միայն թուրքստանական, միայն ադրբեջանական կամ միայն ուկրաինական բնույթ: Անհրաժեշտ է բոլոր ծայրամասերի համար բնորոշ ընդհանուր գծերը վերցնել և մտցնել թեզիսների մեջ՝ վերանայով մասնավորութիւններից. թեզիսներ մշակելու այլ մեթոդներ գոյութիւն չունեն բնութիւն մեջ: Անհրաժեշտ է միքանի իմրի բաժանել վոչ—վելիկոռուսական ազգութիւնները, վոր և արված է թեզիսներում: Վոչ—ռուսական ազգութիւնները մոտ 65·000·000 հոգի յեն: Այդ բոլոր՝ վոչ—ռուսական ազգութիւնների համար բնորոշ ընդհանուր գիծն այն է, վոր նրանք, իրենց պետականութիւն զարգացման իմաստով վերցրած, հետ են մնացել կենտրոնական Ռուսաստանից: Մեր խնդիրն է՝ գործ դնել բոլոր ջանքերը նրա համար, վորպիսի ոգնենք այդ ազգութիւններին, նրանց պրոլետարական, նրանց աշխատավորական տարրերին՝ զարգացնելու իրենց մոտ մայրենի լեզվով խորհրդային պետականութիւնը: Այս ընդհանուրը նշված է թեզիսներում, նրանց գործնական մասում: Ապա, յեթե դնանք ծայրամասերի առանձնահատկութիւնների հետագա կոնկրետացման ու

¹ Տե՛ս այս հրատարակութիւն 26-րդ էջը: Խմբ.:

դիմել, հարկ կլինի դատել վոչ-ուսական ազդուլթյունների մոտ 65·000·000 հոգի ընդհանուր գումարից մի 30 միլիոն թյուրքական բնակչութունը, վոր կապիտալիզմի բուլով չի անցել: Ընկ. Միկոյանը իրավացի չէ՝ ասելով, թե Ադրբեջանը վորոչ կողմերով բարձր է ուսական պրովինցիաներից: Նա, ակներևորեն, Բազուն չիտթում է Ադրբեջանի հետ: Բազուն աճել է վոչ թե Ադրբեջանի ընդերքից, այլ վերելից կառուցված՝ Նորելի, Ռոտ-չիլի, Վիչաուի և այլոց ջանքերով: Ինչ վերաբերում է բուն Ադրբեջանին, ապա նա ամենահետամնաց նահապետական-ֆեոդալական հարաբերությունները յերկիր է հանդիսանում: Ուստի՝ Ադրբեջանն ամբողջական առումով յես վերադրում եմ այն ծայրամասերի խմբին, վորոնք կապիտալիզմի բուլով չեն անցել, և վորոնց վերաբերմամբ անհրաժեշտ է կիրառել՝ այդ ծայրամասերը խորհրդային տնտեսության հունը ներքաշելու յուրահատուկ մեթոդներ: Այս մասին ասված է թեզիսներում: Ապա, կա մի յերրորդ խումբ, վորն ընդգրկում է 8 կամ 10 միլիոնից վոչ ավելի, — դա առավելագույն անասնաբուծական ցեղերն են, վերտեղ ոռոգմական կենցաղը տակավին կենդանի յե, և վորոնք զեռ չեն անցել հողագործական տնտեսության: Դրանք գլխավորապես կիր-գիղներն են, Թուրքեստանի հյուսիսային մասը, բաշկիրները, չե-չենները, ոսերը, ինգուչները: Ազգությունների այս խմբի վերաբերմամբ ամենից առաջ անհրաժեշտ է, վոր նրանք ապահովվեն անհրաժեշտ հողով: Այստեղ կիրգիղներին խոսք չտվին, վիճաբանությունները դադարեցրին: Նրանք ավելի շատ բան կառային այն մասին, թե ի՞նչ տանջանքներ են ապրում լեռնային Բաշ-կիրիան, Կիրգիզիան ու լեռնականները, վորոնք առանց հողի բնաջինջ են լինում: Բայց այն, ինչ այս առթիվ ասաց Սաֆարովը, դա վերաբերում է միայն 8—10 միլիոն բնակչութուն կազմող մի խմբի: Ուստի միտք չունի ընկ. Սաֆարովի գործնական առաջարկները տարածել բոլոր ծայրամասերի վրա, վորովհետև վոչ-ուսական ազդուլթյունների մնացած մասի համար — իսկ նրանք մոտ 55 միլիոն են — այդ ուղղումները վոչ մի նշանակու-թյուն չունեն: Ահա թե ինչու յես, չառարկելով առանձին կե-տերի այն կոնկրետացման, լրացումների ու բարելավումների դեմ, վոր մտքից Սաֆարովը և վորոնք վերաբերում են ազգու-թյունների վորոչ խմբերին, պետք է ասեմ, վոր չի կարելի ունի-վերսալացնել այդ ուղղումները: Ապա, յես պետք է դիտողու-թյուն անեմ ընկ. Սաֆարովի մի ուղղման առթիվ: Նրա ուղղում-

ներից մեկի մեջ սպորդել է մի ֆրազ՝ «աղղային-կուլտուրական ավտոնոմիայի» մասին:

«Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, — ասվում է այնտեղ, — Ռուսաստանի արևելյան ծայրամասերի դադու-թյան և կիսադադության ժողովուրդները, շնորհիվ իմ-պերիալիստական քաղաքականության, զրկված են յեղել ա-մեն մի հնարավորությունից՝ սեփական ազգային-կուլտու-րական ինքնորոշման, մայրենի լեզվով կրթվելու միջոցով հաղորդակից լինելու կապիտալիստական քաղաքակրթության նվաճումներին» և այլն:

Յես պետք է ասեմ, վոր այս ուղղումը յես չեմ կարող ըն-դունել, վորովհետև նրանից բունդիզմի հոտ է փչում: Այդ բուն-դական ձևակերպում է՝ ազգային-կուլտուրական ինքնորոշում: Մենք վաղուց հրաժեշտ ենք տվել ինքնորոշման մշուշապատ լո-գունդներին — դրանք վերականգնել հարկավոր չեն: Ընդամին՝ այս ամբողջ նախադասությունը բառերի ամենաանբնական զուգակ-ցություն է:

Այստեղ յես մի տոմսակ ունեմ այն մասին, վոր մենք, կո-մունիստներս, իբր թե արհեստականորեն բելոռուսական ազգու-թյուն ենք արմատավորում: Դա ճիշտ չէ, վորովհետև գոյու-թյուն ունի բելոռուսական ազգությունը, վորն ունի ուրա լեզվից տարբեր իր լեզուն, ուստի և բելոռուսական ժողովրդի կուլտու-րան կարելի յե բարձրացնել միայն նրա մայրենի լեզվով: Հենց այսպիսի ճառեր հինգ տարի սրանից առաջ լսվում էին Ուկրաին-նայի մասին, ուկրաինական ազգության մասին: Իսկ զեռ մոտ անցյալում ասում էին, թե ուկրաինական հանրապետությունը և ուկրաինական ազգությունը գերմանացիների հորինվածքն են: Մինչդեռ, պարզ է, վոր ուկրաինական ազգությունը գոյություն ունի, և նրա կուլտուրան դարգացնելը կոմունիստների պարտա-կանությունն է: Չի կարելի պատմության դեմ գնալ: Պարզ է, վոր, յեթե Ուկրաինայի քաղաքներում մինչև այժմ տակավին ուսական տարրերն են գերակշռում, ապա այդ քաղաքները մա-մանակի ընթացքում անխուսափելիորեն կուկրաինացվեն: Մի քառասուն տարի սրանից առաջ Ռիգան գերմանական քաղաք էր հանդիսանում, բայց վորովհետև քաղաքները գյուղերի հաշվին են աճում, իսկ գյուղն ազգության պահպանողն է, ուստի Ռիգան այժմ գուտ լատիշական քաղաք է: Սրանից մի հիսուն տարի առաջ Հունգարիայի բոլոր քաղաքները գերմանական բնույթ ունե-լին, այժմ դրանք մաջարացել են: Նույն այս բանը կլինի Բելո-

առևտրային վերաբերմամբ, վորի քաղաքներում գեռևս գերակշռում են վոչ-բելոռուսները:

Վերջացնելով յեզրափակման խոսքս՝ համադրումարին առաջարկում եմ ընտրել մի հանձնաժողով, վորի մեջ պետք է մտնեն մարզերի ներկայացուցիչները՝ թեղիսների այն դորձնական առաջարկների հետագա կոնկրետացման համար, վորոնք հետաքրքրում են մեր բոլոր ծայրամասերին: (Ծափահարություններ):

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԵՐՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Ղնկեր Ստալինի քեզիսները ՌԿ(բ)Կ X համագումարի համար՝
հաստատված կուսակցության ԿԿ-ի կողմից (1921 թ.)

1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ

1. Ժամանակակից ազգերը վորոչ դարաշրջանի—բարձրացող կապիտալիզմի դարաշրջանի—արդատիք են: Ֆեոդալիզմի վերացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը դրա հետ մեկտեղ հանդիսանում է մարդկանց վորպես ազգեր կազմավորվելու ուղի: Անգլիացիները, Ֆրանսացիները, գերմանացիները, իտալացիները վորպես ազգեր կազմավորվեցին Ֆեոդալական տրոհվածություներ հաղթանակող կապիտալիզմի հաղթատուր զարգացման որով:

2. Այնտեղ, վորտեղ ազգերի գոյացումն ընդհանուր է ամբողջական առումով՝ ըստ ժամանակի զուգադիպել է կենտրոնացված պետությունների գոյացմանը, ազգերը, բնականաբար, ստացել են պետական ձև, զարգացել են վորպես ինքնուրույն բուրժուական ազգային պետություններ: Այսպես է յեղել Անգլիայում (առանց Իռլանդիայի), Ֆրանսիայում, Իտալիայում: Յեվրոպայի արևելքում, ընդհակառակը, կենտրոնացված պետությունների գոյանալը, վոր արագացվել է ինքնապաշտպանություն պահանջներով (թյուրքերի, մոնղոլների արշավանք և այլն), տեղի ունեցավ Ֆեոդալիզմը վերացնելուց առաջ, հետևաբար, ազգերի գոյանալուց առաջ: Այս պատճառով էլ այստեղ ազգերը չզարգացան և չեյին էլ կարող զարգանալ իբրև ազգային պետություններ, այլ կազմեցին՝ սովորաբար մի ութեղ, տիրապետող ազգից և միջանի թույլ, յենթակա ազգերից բաղկացած միջանի խառն,

բազմազգ բուրժուական պետութիւններ: Այդպիսիք են՝ Աւստրիան, Հունգարիան, Ռուսաստանը:

3. Ֆրանսիայի և Իտալիայի նման ազգային պետութիւնները, փորձնք սկզբներում հենված են յիշել զլիսափորապես իրենց սեփական ազգային ուժերի վրա, ընդհանրապես առած՝ ազգային ճնշում չեն տեսել: Ի հակադրութիւն սրան՝ բազմազգ պետութիւնները, փորձնք կառուցվում են մշուս ազգերի նկատմամբ մի ազգի, ալիքի ճիշտը՝ նրա իշխող դասակարգի տիրապետութեան վրա, հանդիսանում են ազգային ճնշման և աղղային շարժումների սկզբնական հայրենիքն ու հիմնական ասպարեզը: Գերիշխող ազգի շահերի և հպատակ ազգերի շահերի հակասութիւններն այն հակասութիւններն են, առանց փորձնք լուծման անհնարին և բազմազգ պետութեան կայուն գոյութիւնը: Բուրժուական իրազմազգ պետութեան վաղերգութիւնն այն և, վոր նա անգոր և լուծելու ալդ հակասութիւնները, վոր ազգերը «համասարեցնելու» և աղղային փոքրամասնութիւնները «պաշտպանելու» նրա ամեն մի փորձը՝ մասնավոր սեփականութիւնը և դասակարգային անհամասարութիւնը պահպանելու պայմաններում՝ սովորաբար վերջանում և նոր անհաջողութեամբ, աղղային ընդհարումների նոր սրումով:

4. Կապիտալիզմի հետագա աճումը Յեկրոդայում, փաճառահաման նոր շուկաների պահանջը, հումքի ու վառելիքի փորոնումը, վերջապես, իմպերիալիզմի զարգացումը, կապիտալի արտահանումը և ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների ապահովման անհրաժեշտութիւնը, մեկ կողմից հանգեցրին այն բանին, վոր աղղային հին պետութիւնները նոր տերիտորիաներ գալթեցին և զարձան բազմազգ (պաղութային) պետութիւններ՝ իրենց հատուկ աղղային ճնշումով ու աղղային ընդհարումներով (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա), մշուս կողմից՝ հին բազմազգ պետութիւնների զերիշխող աղղերի մեջ ուժեղացավ վոչ միայն պետական հին սահմանները պահելու, այլև այս վերջիններն ընդարձակելու, նոր (թույլ) աղղութիւններ՝ իհաշիֆ հարեան պետութիւններ՝ իրենց հպատակեցնելու ձգտումը: Դրանով իսկ աղղային հարցն ընդլայնվեց և իրերի բուն իսկ ընթացքով, վերջիվերջո, միաձուլվեց դաղութիւնների ընդհանուր հարցի հետ, իսկ աղղային ճնշումը ներպետական հարց լինելուց վերածվեց միջպետական հարցի, իմպերիալիստական «մեծ» պետութիւնների պայքարի (ու պատերազմի) հարցի՝ թույլ, իրավապակաս աղղութիւնները հպատակեցնելու համար:

5. Իմպերիալիստական պատերազմը, վոր մինչև արմատները բաց արեց բուրժուական բազմազգ պետութիւնների աղղային անհաշտելի հակասութիւններն ու ներքին անդորութիւնը, հանգեցրեց աղղային կոնֆլիկտների ծայրահեղ սրմանը՝ հաղթած պաղութային պետութիւնների ներսում (Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան), պարտված հին բազմազգ պետութիւնների (Աւստրիան, Հունգարիան, Ռուսաստանը 1917 թ.) կատարյալ քայքայմանը, և վերջապես, բուրժուական աղղային նոր պետութիւնների գոյացմանը (Լեհաստանը, Չեխո-Սլովակիան, Հարավ-Սլավիան, Ֆինլանդիան, Վրաստանը, Հայաստանը և այլն) վորպես աղղային հարցի ամենից ալիքի «արմատական» լուծմանը՝ բուրժուաղիայի կողմից: Բայց աղղային ինքնուրույն նոր պետութիւնների գոյացումը չհաստատեց և չեր ել կարող հաստատել աղղութիւնների իսաղաղ համակեցութիւն, չվերացրեց և չեր ել կարող վերացնել վոչ աղղային անհամասարութիւնը, վոչ աղղային ճնշումը, վորովհետև նոր աղղային պետութիւնները, վորոնք հենվում են մասնավոր սեփականութեան ու դասակարգային անհամասարութեան վրա, չեն կարող գոյութիւն ունենալ՝ ա) առանց իրենց աղղային փոքրամասնութիւններին ճնշելու (որինակ՝ Լեհաստանը, վոր ճնշում և բելոռուսներին, հրեաներին, լիտվացիներին, ուկրաինացիներին. Վրաստանը, վոր ճնշում և ոսերին, արխաններին, հայերին. Հարավ-Սլավիան, վոր ճնշում և իտովաթներին, բոսնիացիներին և այլն). բ) առանց իրենց տերիտորիան ի հաշիվ հարեանների ընդարձակելու, վորը կոնֆլիկտներ ու պատերազմներ և առաջացնում (Լեհաստանը՝ Լիտվայի, Ուկրաինայի, Ռուսաստանի դեմ. Հարավ-Սլավիան՝ Բուլղարիայի դեմ. Վրաստանը՝ Հայաստանի, Թյուրքիայի դեմ և այլն). գ) առանց իմպերիալիստական «մեծ» պետութիւններին Ֆինանսական, տնտեսական ու ռազմական տեսակետից յենթարկվելու:

6. Այսպիսով, հետպատերազմյան շրջանը բաց և անում աղղային թշնամանքի, անհամասարութեան, ճնշման, կոնֆլիկտների, պատերազմների, քաղաքակիրթ յերկիրների աղղերի կողմից ինչպես միմյանց նկատմամբ, այնպես ել իրախաղակաս ժողովուրդների նկատմամբ իմպերիալիստական դաղանութիւններ գործադրելու անմիթար պատկեր. մի կողմից՝ միքանի «մեծ» պետութիւններ, վորոնք ճնշում և շահագործում են կախյալ և «անկախ» (փաստորեն միանդամայն կախյալ) աղղային պետութիւնների ամբողջ մասսան և այլ պետութիւնների պայքարը միմյանց դեմ՝

ազգային պետութիւնները շահագործելու մենաշնորհի համար մյուս կողմից՝ թե կախյալ և թե անկախ ազգային պետութիւնների պայքարը «մեծ» պետութիւնների անտանելի ճնշման դեմ՝ ազգային պետութիւնները պայքարը միմյանց դեմ՝ իրենց ազգային տերիտորիան ընդարձակելու համար։ ազգային պետութիւնների պայքարը, յուրաքանչյուրինն առանձին վերցրած, իրենց ճնշված ազգային փոքրամասնութիւնների դեմ։ վերջապես, դադութների ազատագրական շարժման ուժեղացումը «մեծ» պետութիւնների դեմ և ազգային կոնֆլիկտների սրումն ինչպես այդ պետութիւնների ներսում, այնպես եւ ազգային այն պետութիւնների ներսում, վրոնք իրենց կազմի մեջ ունեն, իբրև կանոն, մի շարք ազգային փոքրամասնութիւններ։ Այս և «աշխարհի պատկերը», վոր ժառանգութիւն և թողել իմպերիալիստական պատերազմը։

Բուրժուական հասարակութիւնն ազգային հարցի լուծման դործում կատարյալ անանկ դուրս յեկալ։

II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՎԱՐԳԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Յեթե մասնավոր սեփականութիւնն ու կապիտալը մարդկանց անխուսափելիորեն անջատում են իրարից, ազգային յերկպառակութիւն են բորբոքում և ուժեղացնում են ազգային ճնշումը, ապա կոլեկտիվ սեփականութիւնը և աշխատանքը նույնքան անխուսափելի կերպով մարդկանց մոտեցնում են իրար, խարխում են ազգային յերկպառակութիւն հիմքը, վոնչացնում են ազգային ճնշումը։ Կապիտալիզմի դոյութիւնն առանց ազգային ճնշման, նույնքան և աներեւակայելի, վորքան վոր աներեւակայելի յե սոցիալիզմի դոյութիւնն առանց ճնշված ազգերի ազատագրութիւն, առանց ազգային ազատութիւն։ Շովինիզմն ու ազգային պայքարն անխուսափելի, անխափանելի յեն, քանի դեռ դոյուզացիութիւնը (և առհասարակ մանր բուրժուազիան), վոր լեցուն և նացիոնալիստական նախապաշարմունքներով, բուրժուազիայի հետևից և դնում և, ընդհակառակը, ազգային խաղաղութիւնն ու ազգային ազատութիւնն ապահովված կարելի յե համարել, յեթե դոյուզացիութիւնը պրոլետարիատի հետևից և դնում, այսինքն՝ յեթե ապահովված և պրոլետարիատի դիկտատուրան։ Ուստի՝ Խորհուրդների հաղթութիւնը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը հանդիսանում են ազգային ճնշումը վոնչացնելու, ազգային հավասարութիւն հաստատելու, ազգա-

յին փոքրամասնութիւնների իրավունքներն ապահովելու հիմնական պայմանը։

2. Խորհրդային հեղափոխութիւն փորձն ամբողջապես հաստատում և այս դրույթը։ Խորհրդային հասարակարգի հաստատումը Ռուսաստանում և ազգերի պետական անջատման իրավունքի հռչակումը չուտ վիլին Ռուսաստանի ազգութիւնների աշխատավորական մասսաների միջև յեղած հարաբերութիւնները, խարխելցին ազգային հին թշնամանքը, զրկեցին հիմքից ազգային ճնշումը և դեպի ռուսական բանվորները նվաճեցին նրանց այլազգի յեղբայրակիցների վստահութիւնը վոնչ միայն Ռուսաստանում, այլև Յեմլրոպայում ու Ասիայում, այս վստահութիւնը հասցրին խանդավառութիւն, ընդհանուր դործի համար մարտնչելու պատրաստակամութիւն։ Խորհրդային հանրապետութիւնների կազմվելն Ադրբեջանում, Հայաստանում ունեցալ նույն այդ հետևանքները՝ վոնչացնելով ազգային ընդհարումները և վերացնելով թյուրք ու հայ և հայ ու ադրբեջանցի աշխատավոր մասսաների միջև յեղած «դարավոր» թշնամանքը։ Նույն այդ բանը պետք և ասել՝ Հոնգարիայում, Բալարիայում, Ֆինլանդիայում, Լատվիայում խորհուրդների ունեցած ժամանակավոր հաղթութիւն առթիվ։ Մյուս կողմից, վստահ կարելի յե ասել, վոր ռուսական բանվորներն անկարող կլինեյին հաղթել Կոլչակին ու Դենիկինին, իսկ Ադրբեջանի ու Հայաստանի հանրապետութիւնները չեյին կարող վոտքի կանգնել՝ առանց իրենց տանն ազգային թշնամանքն ու ազգային ճնշումը վերացնելու, առանց Արևմուտքի ու Արևելքի ազգութիւնների աշխատավոր մասսաների վստահութիւնն ու խանդավառութիւնն իրենց կողմն ունենալու։ Խորհրդային հանրապետութիւնների ամրապնդումը և ազգային ճնշման վոնչացումը հանդիսանում են իմպերիալիստական սուրկացումից աշխատավորութիւնն ազատագրելու միևնույն պրոցեսի յերկու կողմը։

3. Բայց խորհրդային՝ թեկուզ և ծավալով ամենաանշան հանրապետութիւնների դոյութիւնը մահացու սպառնալիք և իմպերիալիզմի համար։ Այդ սպառնալիքը վոնչ միայն այն և, վոր խորհրդային հանրապետութիւնները, իմպերիալիզմից խզելով իրենց կապերը, դադութներ ու կիսադադութներ լինելուց դարձան իրոք ինքնուրույն պետութիւններ և դրանով իսկ իմպերիալիստներին զրկեցին տերիտորիայի մի ավելորդ պատառից և ավելորդ յեկամուտներից, այլև ամենից առաջ այն, վոր խորհրդային հանրապետութիւնների բուն իսկ դոյութիւնը, այս հան-

բաղադրությունների յուրաքանչյուր քայլը՝ բուրժուազիան ճնշելու և պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու ճանապարհին՝ մեծագույն ազդեցությամբ և կապիտալիզմի ու իմպերիալիզմի դեմ, ազդեցությամբ՝ կախյալ յերկիրներն իմպերիալիստական ստրկացումից ազատագրելու համար, մի անհաղթահարելի գործոն և՛ կապիտալիզմը նրա բոլոր տեսակներով քայքայելու և կաղճալուծելու համար։ Այստեղից՝ իմպերիալիստական «մեծ» պետությունները կողմից խորհրդային հանրապետությունները դեմ պայքարելու անխուսափելիությունը, «մեծ» պետությունների ձգտումը՝ փոխնչացնելու այդ հանրապետությունները։ Խորհրդային Ռուսաստանի դեմ «մեծ» պետությունների պայքարելու պատմությունը—պետություններ, վորոնք Խորհրդային Ռուսաստանի դեմ են հանում ծայրամասային բուրժուական մի կուսովարությունը մյուսի հետևից, հակահեղափոխական գեներալների մի խումբը՝ մյուսի հետևից, վորոնք հողածուխյամբ բլուրկադայի յեն յենթարկում Խորհրդային Ռուսաստանը և առհասարակ աշխատում են նրան տնտեսապես մեկուսացնել,—պերճախուս կերպով ասում և այն մասին, վոր միջադպրային տվյալ հարաբերությունների պարադոքսում, կապիտալիստական շրջապատման պայմաններում, առանձին վերցրած՝ խորհրդային վոչ մի հանրապետություն չի կարող իրեն սպառնոված համարել համաշխարհային իմպերիալիզմի կողմից տնտեսական ուժասպառման ու ռազմական ջախջախման յենթարկվելուց։

4. Ուստի և՛ անկայուն, անհաստատուն և խորհրդային առանձին հանրապետությունների մեկուսացած գոյությունը՝ կապիտալիստական պետությունների կողմից նրանց գոյությունը դեմ յեղած սպառնալիքի պատճառով։ Խորհրդային հանրապետությունների պաշտպանության ընդհանուր շահերը՝ մի կողմից, պատերազմի քայքայած արտադրողական ուժերի վերականգնումը՝ մյուս կողմից, հացապակաս խորհրդային հանրապետություններին հացաչափ հանրապետությունների կողմից անհրաժեշտ պարենային ոգնություն ցույց տալը՝ յերբորդ կողմից,—հրամայաբար թելադրում են առանձին խորհրդային հանրապետությունների պետական միություն կնքել վորպես իմպերիալիստական ստրկացումից և աղքատի ճնշումից փրկվելու միակ ուղի։ «Իրենց» և «ոտար» բուրժուազիայից ազատված աղքատի խորհրդային հանրապետությունները կարող են իրենց գոյությունը պաշտպանել և հաղթել իմպերիալիզմի միացյալ ուժերին՝ միայն

միավորվելով վորպես մի սերտ պետական միություն, կամ թե չէ՝ նրանք բնավ չեն հաղթի։

5. Խորհրդային հանրապետությունների Ֆեդերացիան, հիմնված ռազմական ու տնտեսական դործի ընդհանրության վրա՝ հանդիսանում և պետական միության այն ընդհանուր ձևը, վորը հնարավորություն է տալիս. ա) սպառնովելու ինչպես առանձին հանրապետությունների, այնպես և ամբողջովին վերցրած՝ Ֆեդերացիայի ամբողջությունն ու տնտեսական զարգացումը. բ) ընդգրկելու զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած զանազան ազգերի ու ժողովուրդների կենցաղի, կուլտուրայի և տնտեսական կացության ամբողջ բազմազանությունը, և համապատասխան սրան՝ կիրառել Ֆեդերացիայի այս կամ այն ձևը. գ) կարգի դնելու այն ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցությունն ու յեղբայրական համագործակցությունը, վորոնք այս կամ այն կերպ իրենց բախտը կապել են Ֆեդերացիայի բախտի հետ։ Ռուսաստանի փորձը,—վորտեղ կիրառվում են Ֆեդերացիայի զանազան ձևերը, սկսած խորհրդային ավտոնոմիայի վրա հիմնված Ֆեդերացիայից (Կիրգիզիան, Բաշկիրիան, Թաթարիան, Լեոնցիները, Դաղստանը), մինչև անկախ խորհրդային հանրապետությունների հետ պայմանագրական հարաբերությունների վրա հիմնված Ֆեդերացիան (Ուկրաինան, Ադրբեյջանը), և վորտեղ թույլ են տրվում այս ձևերի միջև միջակա աստիճաններ (Թուրքստանը, Բելուսիան),—ամբողջապես հաստատեց Ֆեդերացիայի՝ իբրև խորհրդային հանրապետությունների պետական միության ընդհանուր ձևի՝ ամբողջ նպատակահարմարությունն ու ճկունությունը։

6. Բայց Ֆեդերացիան կարող և ամուր լինել, իսկ Ֆեդերացիայի արդյունքները՝ իրական միայն այն դեպքում, յեթե Ֆեդերացիան հենվում և իր մեջ մտնող յերկիրների փոխադարձ վստահության ու կամավոր համաձայնության վրա։ Յեթե ՌՍՖՍՀ աշխարհում միակ յերկիրն և, վորտեղ հաջողվել և մի ամբողջ շարք ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցության և յեղբայրական համագործակցության փորձը, ապա դա այն պատճառով և, վոր այնտեղ չկան վոչ տիրապետողներ, վոչ ել ստորադրյալներ, վոչ մետրոպոլիա, վոչ ել գաղութներ, վոչ իմպերիալիզմ, վոչ ել աղքատի ճնշում,—այնտեղ Ֆեդերացիան հաստատված և զանազան ազգերի աշխատավոր մասոաների փոխադարձ վստահության և դեպի միություն ունեցած կամավոր

ձգտման վրա: Ֆեդերացիայի այս կամավոր բնույթն անպատճառ պետք է պահպանվի նաև առաջիկայում, վերոմհետև միայն այսպիսի Ֆեդերացիան է, վոր կարող է դառնալ անցման ձև դեպի բոլոր յերկիրների աշխատավորութան այն բարձրագույն միասնությունը համաշխարհային միասնական տնտեսութան մեջ, վորի անհրաժեշտությունը քանի զնում ավելի ու ավելի չոչափելի չէ դառնում:

III. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԵՐՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՌՍՖՍՀ և նրա հետ կապված խորհրդային հանրապետությունները մոտ 140 միլիոն բնակչություն են ներկայացնում: Նրանցից վոչ-վելիկոուսները մոտ 65 միլիոն են (ուկրաինացիները, բելուսները, կիրգիզները, ուզբեկները, թուրքմենները, տաջիկները, ադրբեջանցիները, Պովոլժյեյի թաթարները, Ղրիմի թաթարները, բուխարացիները, խիվացիները, բաշկիրները, հայերը, չեչենները, կարարդացիները, օսերը, չերքեզները, ինգուշները, կարաչայցիները, բալխարները¹, կալմիկները, կարեևները, ավարցիները, դարգինները, կադիկուսները, կյուրդները, կոմիկները², մարիները, չուվաշները, ղոտյակները, Պովոլժյեյի գերմանացիները, բուրյատները, յակուտները և այլն): Ֆարիդի քաղաքականությունը, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այդ ժողովուրդների նկատմամբ այն է յեղել, վոր սպանի նրանց մեջ ամեն մի պետականության սաղմեր, խեղի (КОЛЕЧЬ) նրանց կուլտուրան, ճնշի լեզուն, տգիտություն մեջ սլահի նրանց և, վերջապես, բոտ կարելույն նրանց ուսուցին: Այդպիսի քաղաքականության արդյունքներն են՝ այդ ժողովուրդների անդարդացածությունն ու քուլաքական հետամնացությունը:

Այժմ, յերբ կալվածատերերն ու բուրժուազիան տապալված են, իսկ ժողովրդական մասսաները խորհրդային իշխանություն են հռչակել նաև այդ յերկիրներում, կուսակցության խնդիրն է՝ ողնել վոչ-վելիկոուս ժողովուրդների աշխատավորական մասսաներին՝ հասնելու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին,

ուղնել նրանց, վորպեսզի՝ ա) իրենց մոտ զարգացնեն ու ամրապնդեն խորհրդային պետականությունը այն ձևերով, վորոնք համապատասխան են այդ ժողովուրդների ազգային նկարագրին, բ) իրենց մոտ կազմակերպեն տեղական բնակչության կենցաղն ու հոգեբանությունն իմացող տեղացիներից կազմված՝ մայրենի լեզվով գործող դատարան, ազմինխտրացիա, տնտեսության որդաններ, իշխանության որդաններ, գ) իրենց մոտ մայրենի լեզվով զարգացնեն մամուլ, դպրոց, թատրոն, ակումբային գործը և առհասարակ՝ կուլտուր-լուսավորական հիմնարկներ:

2. Յեթե 65 միլիոն վոչ-վելիկոուս բնակչությունից հանենք Ուկրաինան, Բելուսիան, Ադրբեջանի աննշան մասը, Հայաստանը, վորոնք այս կամ այն աստիճանով անցել են արդյունարերական կապիտալիզմի շրջանը, ապա մնում է մոտ 30 միլիոն՝ առավելապես թյուրքական բնակչություն (Թուրքեստան, Ադրբեջանի մեծ մասը, Դաղստանը, լեռնականները, թաթարները, բաշկիրները, կիրգիզները և ուրիշները), վորոնք չեն կարողացել անցնել կապիտալիստական զարգացման բովով, չունեն կամ գրեթե չունեն իրենց արդյունարերական պրոլետարիատը, մեծ մասամբ պահպանել են անասնաբուծական տնտեսությունն ու նահապետական-տոհմային կենցաղը (Կիրգիզիան, Բաշկիրիան, Հյուսիսային Կովկասը), կամ կիսակապիտալիստական-կիսաֆեոդալական կենցաղի նախնադարյան ձևերից դենը չեն անցել (Ադրբեջանը, Ղրիմը և այլն), բայց արդեն ներգրավված են խորհրդային զարգացման ընդհանուր հունի մեջ:

Կուսակցության խնդիրն այս ժողովուրդների աշխատավորական մասսաների վերաբերմամբ (բացի 1 կետում նշված խնդրից) այն է, վոր ողնի նրանց վերացնելու նահապետական-ֆեոդալական հարաբերությունների մնացուկները և հաղորդակից դառնալու խորհրդային տնտեսության շինարարությունը՝ գյուղացիական աշխատավորական խորհուրդների հիման վրա, այդ ժողովուրդների մեջ կոմունիստական այնպիսի ամրակուռ կադմակերպություններ ստեղծելու միջոցով, վորոնք ընդունակ լինեյին ողապործելու ռուսական բանվորների ու գյուղացիների խորհրդային-տնտեսական շինարարության վերաբերյալ փորձը և իրենց շինարարական աշխատանքում կարողանային դրա հետ մեկտեղ հաշվի առնել յուրաքանչյուր տվյալ ժողովրդի տնտեսական կոնկրետ իրավիճակն, դասակարգային կառուցվածքի, կուլտուրայի ու կենցաղի բոլոր առանձնահատկությունները՝ ա-

¹ Վերջին յոթը ժողովուրդները միավորվում են վորպես «Լեռնականներ» խումբ:

² Վերջին հինգ ժողովուրդները միավորվում են վորպես «Դաղստանցիներ» խումբ:

ռանց մեխանիկորեն տեղափոխելու կենտրոնական Ռուսաստանի տնտեսական միջոցառումները, վորոնք պիտանի յեն տնտեսական զարգացման ալլ, ալիկի բարձր աստիճանի համար:

3. Յեթե 30 միլիոն՝ առավելապես թյուրքական՝ բնակչությունից հանենք Ադրբեջանը, Թուրքեստանի մեծ մասը, թաթարներին (Պովոլժյեյի ու Ղրիմի), Բուխարան, Նիվան, Դաղըստանը, լեռնականների մի մասը (կաբարդայիներին, չերքեզներին, բալկարներին) և միջանի ալլ ազգություններ, վորոնք արդեն նստակյաց են դարձել և ամուր կերպով հաստատվել են վորոշ տերիտորիայի վրա, ապա մնում են մոտ 10 միլիոն կիրգիզներ, բաշկիրներ, չեչեններ, ոսեր, ինդուշներ, վորոնց հոգերը մինչև վերջին ժամանակներս կոլոնիզացիայի որսիկտ եյին ծառայում ուս դաղթականների կողմից, վորոնք արդեն կարողացել են խել վերոհիշյալներից վարելու լավագույն հողամասերը և նրանց սխտեմատիկորեն արտաժողով են անպտուղ անապատները: Յարիգմի քաղաքականությունը, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այն է յեղել, վոր այս շրջաններում վորքան կարելի յե շատ կուլակային տարեր արմատավորեն ուս գյուղացիներից ու կազակներից՝ դարձնելով այս վերջիններիս մեծապետական ձգտումների վստահելի հենարան: Այս քաղաքականության հետևանքը՝ յերկրի խորքերը քշվող տեղացիների (կիրգիզներ, բաշկիրներ) աստիճանական բնաջնջվելն է:

Կուսակցության խնդիրն այս ժողովուրդների աշխատավորական մասսաների վերաբերմամբ (բացի 1 և 2 կետերում հիշատակված խնդիրներից) այն է, վոր միավորի նրանց ջանքերը տեղական ուս բնակչության աշխատավոր մասսաների ջանքերի հետ՝ ընդհանրապես կուլակությունից, մանավանդ վելիկոուսական գեշատիչ կուլակությունից ազատվելու համար մղվող պայքարում, վոր բոլոր ուժերով ու բոլոր միջոցներով ոգնի նրանց՝ իրենց ուսերից թրթափելու կուլակ-կոլոնիզատորներին և, այսպիսով, նրանց ապահովի մարդկային դոյության համար անհրաժեշտ պիտանի հոգերով:

4. Բացի վերը հիշատակված ազգերից ու ժողովուրդներից, վորոնք դասակարգային վորոշ կառուցվածք ունեն և վորոշ տերիտորիա յեն գրավում, ՌՄՖՍՀ սահմաններում դոյություն ունեն նաև առանձին հոսուն ազգային խմբեր, ազգային փոքրամասնություններ, վորոնք ցրված են ալլազգի կոմպակտ մեծամասնությունների մեջ և մեծ մասամբ չունեն վոչ վորոշ դասակարգային

կառուցվածք, վո'չ ել վորոշ տերիտորիա (լատիշները, էստոնացիները, լեհերը, հրեաները և ուրիշներ): Յարիգմի քաղաքականությունն այն է յեղել, վոր բոլոր միջոցներով, ընդհուպ մինչև ջարդերը (հրեական ջարդերը) ի չիք դարձնի այս փոքրամասնությունները:

Այժմ, յերբ ազգային արտոնությունները վոչնչացված են, ազգությունների հավասարությունը կենսագործված է, իսկ ազգային փոքրամասնությունների ազատ ազգային զարգացման իրավունքն ապահովված է խորհրդային հասարակակարգի հենց բնութիով, կուսակցության խնդիրն ազգային այդ խմբերի աշխատավորական մասսաների վերաբերմամբ այն է, վոր ոգնի նրանց՝ լիակատար կերպով ոգտադործելու նրանց համար ապահովված ազատ զարգացման այս իրավունքը:

5. Կոմունիստական կադմակերպությունների զարգացումը ծայրամասերում ընթանում է փոքր ինչ յուրորինակ պայմաններում, վորոնք արդելակում են կուսակցության նորմալ աճումն ալլ շրջաններում: Մի կողմից, ծայրամասերում աշխատող վելիկոուս կոմունիստները, վոր «պետական» (государственный) ազգի դոյության պայմաններում են մեծացել և ազգային ճնշում ասած բանը չեն իմացել, կուսակցական աշխատանքի մեջ հաճախ խիստ պակասեցնում են ազգային առանձնահատկությունների նշանակությունը, կամ թե չե՝ բնավ ել նրանց հետ հաշվի չեն նստում, իրենց աշխատանքի մեջ հաշվի չեն առնում տվյալ ժողովրդի դասակարգային կառուցվածքի, կուլտուրայի, կենցաղի, պատմական անցյալի առանձնահատկությունները, այսպիսով գոհակացնելով ու խեղաթյուրելով կուսակցության քաղաքականությունն ազգային հարցում: Այս հանգամանքի հետևանքը լինում է կոմունիզմի մեծապետականության, կոլոնիզատորության, վելիկոուսական շովինիզմի կողմը թեքվելը: Մյուս կողմից, կոմունիստ տեղացիները, վորոնք ապրել են ազգային ճնշման ծանր շրջանը և տակավին վոչ ամբողջովին են ազատագրվել այդ ճնշման ուրվականներից, հաճախ չափազանցնում են ազգային առանձնահատկությունների նշանակությունը կուսակցական աշխատանքում՝ սովերի մեջ թողնելով աշխատավորության դասակարգային շահերը, կամ թե չե՝ տվյալ ազգի աշխատավորության շահերը պարզապես չփոթում են Վիենույն ազգի «համազգային» շահերի հետ՝ չկարողանալով դատել առաջինները վերջիններից և սրանց վրա կառուցել կուսակցական աշխատանք

քը: Իր հերթին՝ այս հանգամանքը տանում է դեպի թեքում կոմունիզմից՝ բուրժուա-դեմոկրատական նացիոնալիզմի կողմը, նացիոնալիզմ, վորը յերբեմն ընդունում է պանխւսլամիզմի, պան-թյուրքիզմի ձև (Արևելքում):

Համագումարը վճռականորեն դատապարտելով այս յերկու թեքումն ել, վորպես կոմունիզմի համար վնասակար ու վտանգավոր թեքումներ՝ հարկավոր է համարում մատնանշել առաջին թեքման, — մեծապետականության, կոլոնիզատորության կողմը կատարվող թեքման՝ առանձին վտանգավորությունն ու առանձին վնասակարությունը: Համագումարը հիշեցնում է, վոր առանց հաղթահարելու կոլոնիզատորական ու նացիոնալիստական մնացուկները կուսակցական շարքերում՝ ծայրամասերում անհնարին է ստեղծել ամրակուռ և մասսաների հետ կապված իսկապես կոմունիստական կազմակերպություններ, վորոնք իրենց շարքերում ինտերնացիոնալիզմի հիմունքով համախմբում են տեղական և ոռւս բնակչության պրոլետարական տարրերը: Ուստի և՛ համագումարը դնում է, վոր ազգայնական, առաջին հերթին կոլոնիզատորական տատանումների վերացումը կոմունիզմի մեջ, դա—կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկն է ծայրամասերում:

6. Ռազմաճակատներում ունեցած հաջողությունների կապակցութեամբ և առանձնապես վրանդելի լիկվիդացիայից հետո, արդյունաբերական պրոլետարիատ չունեցող կամ գրեթե չունեցող միջանի հետամնաց ծայրամասերում ուժեղացել է քաղքենիական-նացիոնալիստական տարրերի կողմից կարիերայի համար հանդես բերվող ձգտումը դեպի կուսակցությունը: Այս տարրերը, հաշվի առնելով կուսակցության՝ վորպես փաստորեն կառավարող ուժի՝ դրությունը, սովորաբար կոմունիզմի գույնով ներկվում և հաճախ ամբողջ խմբերով ձգտում են դեպի կուսակցություն՝ նրա մեջ մտցնելով վատ քողարկված շովինիզմի ու քայքայման վորի, ընդվորում ծայրամասերում ընդհանրապես թույլ յեղող կուսակցական կազմակերպությունները վոչ միչտ են ի վիճակի լինում անդրդվելի մնալ (устоять) կուսակցությունն ի հաշիվ նոր անդամների «ընդլայնելու» գայթակղության հանդեպ:

Կոչ անելով վճռականորեն պայքարելու պրոլետարիատի կուսակցության մեջ խցկվող ամեն տեսակի կեղծ-կոմունիստական տարրերի դեմ՝ համագումարը նախազգուշացնում է կուսակցությանը՝ ի հաշիվ քաղքենիական-նացիոնալիստական ինտելիգեն-

տական տարրերի «ընդլայնվելուց»: Համագումարը դնում է, վոր կուսակցության համալրումը ծայրամասերում պետք է կատարվի դիսավորապես ի հաշիվ այդ ծայրամասերի պրոլետարների, չքավորների և աշխատավոր դյուղացիների, միաժամանակ աշխատելով ամրացնել ծայրամասերի կուսակցական կազմակերպությունները նրանց վորակական կազմը բարելավելու միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ (ԶԵԿՈՒՑՈՒՄ ՌԿ(Բ)Կ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ 1921 Թ. ՄԱՐՏԻ 10-ԻՆ	5
ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ	14

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ (ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԹԵԶԻՄՆԵՐԸ ՌԿ(Բ)Կ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱ- ՄԱՐ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԿ-Ի ԿՈՂՄԻՑ (1921 Թ.))	19
--	----

Թարգմ. Պ. Արեյան
Խմբ. Հ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Պատ. սրբազրիչ Լ. Արովյան

Դրավիտի լիազոր Ի—9711, հրատ. № 473,
պատվեր № 147, ամրագ 5000
Հանձնված է արտադրության 25/VII 1937 թ.
Ստորագրված է ապագրության 13/VIII 1937 թ.
Դինը 40 կ.

Հայկուհրատի ապարան, Յերևան,
Ալավերդյան № 71



ՀՀ Ազգային գրադարան



NL0181809

406

ԳԻՆԸ 40 Կ.

И. С Т А Л И Н
ОЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ
ПАРТИИ В НАЦИОНАЛЬНОМ
ВОПРОСЕ

Армпартиздат, Ереван, 1937